ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **07/10/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Կարեն Բաղդասարյանը, Նարինե Խաչատրյանը, Վիտալի Յուսուբովը, Ջոն Պողոսյանը, Էդուարդ Սողոյանը, Անուշ Սուքիասյանը, Վահան Ստեփանյանը, Արման Վարդանյանը, Իզաբելա Տոմեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նունե Սոլոյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը՝
1. Հայստանի Հանրապետությաան Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25- ի N 121-Ն որոշման մեջ փոփոխությոոն կատարելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին,
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին,
4. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին,
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սանիտարական

մաքրման սխեման և աղբահանության իրականացման կարգը հաստատելու մասին,
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները հաստատելու մասին,
7. «Հայ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 110/35/10 կՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110կՎ «Ստեփանավան -2» օդային գծով կառուցման աշխատանքներին նախնական համաձայնությունն տալու մասին

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25- Ի N 121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՈՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստաելու մասին» N121-Ն որոշման NN1-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Ընդունել ի գիտություն 2025 թվականի բյուջեի կատարաման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշումով հաստատված կարգի 7-րդ, 9-րդ կետերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելված NN1,2 :

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1 Թույլատրել ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում բացել ՀՀ Դրամ արժույթով արտաբյուջետային հաշիվ՝ «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում, 2-րդ փուլ»

ծրագրի շրջանակում «Անդրսահմանային համագործակցության ծրագրերի դրամաշնորհներ» դրամաշնորհի ստացման նպատակով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հեդվածի 1-ին մասի 20-րդ կետով, « Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում աղբամանների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման նվազագույն ժամանակացույցը՝համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի սանիտարական մաքրման սխեման ՝ համաձայն հավելված 4-ի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի,

Տաշիր համայնքի ավագանին որոշում է ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ՀԱՅ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 110/35/10 ԿՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ» ԵՎ «ՏԱՇԻՐ» ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐԻ 2-ՐԴ ՍՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ 110ԿՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ -2» ՕԴԱՅԻՆ ԳԾՈՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 02.07.2025-ի «Հայ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 110/35/10 կՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110կՎ «Ստեփանավան -2» օդային գծով կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն «Հայ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 110/35/10 կՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110կՎ «Ստեփանավան -2» օդային գծով կառուցման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

Ավագանու անդամներ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Նունե Սոլոյանը

_____